ՉԵՂԱՐԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԻԴ ՊՐԻՆՏ» ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մինչ «ԻԴ ՊՐԻՆՏ» (այսուհետ՝ ԻԴ ՊՐԻՆՏ) կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը խնդրում ենք ծանոթանալ այս չեղարկման քաղաքականությանը։

Օգտվելով ԻԴ ՊՐԻՆՏ կայքից կամ հավելվածից՝ Դուք տալիս եք Ձեր համաձայնությունն առաջնորդվել սույն քաղաքականությամբ։

1. **Չեղարկման իրավունք.**

Եթե Դուք օգտվում եք ԻԴ ՊՐԻՆՏ կողմից մատուցվող ծառայություններից և դեռ չեք վճարել մատուցվող ծառայության համար, Դուք կարող եք ցանկացած պահի հրաժարվել ծառայությունից օգտվելուց և դուրս գալ ԻԴ ՊՐԻՆՏ կայքից կամ հավելվածից, որն ինքնին կհամարվի գործարքի չեղարկում։

Եթե Դուք օգտվում եք ԻԴ ՊՐԻՆՏ կողմից մատուցվող ծառայություններից և արդեն իսկ վճարել եք մատուցվող ծառայության համար, Դուք կարող եք վճարումը կատարելուց հետո՝ մինչև Համակարգի կողմից տպարանների որոնումը և Ձեր կողմից տպարանի ընտրումը կապ հաստատել ԻԴ ՊՐԻՆՏ-ի հետ՝ կայքում և հավելվածում նշված հեռախոսահամարով և չեղարկել Ձեր կողմից հայցվող ծառայության մատուցումը։ Տվյալ դեպքում ԻԴ ՊՐԻՆՏ կողմից 10 աշխատանքային օրվա ընթացքում Ձեզ կփոխանցվի Ձեր վճարած գումարի 90 տոկոսը, իսկ 10 տոկոսը կգանձվի որպես տույժ։ Սույն կետով նախատեսված ժամկետում չեղարկումը չկատարելը կհամարվի ԻԴ ՊՐԻՆՏ ծառայություններից օգտվելու համաձայնություն և հիմք կհանդիսանա ԻԴ ՊՐԻՆՏ-ի համար՝ ծառայությունների մատուցումն ավարտին հասցնելու համար։

2. **Քաղաքականության փոփոխություն.**

ԻԴ ՊՐԻՆՏ-ին իրավունք է վերապահվում ցանկացած պահի փոփոխել սույն չեղարկման քաղաքականությունը։ Չեղարկման քաղաքականության վերջին փոփոխությունը կտեղադրվի կայքում և հավելվածում, որը կհամարվի դրա հրապարակում։ ԻԴ ՊՐԻՆՏ-ը առաջարկում է իր կողմից մատուցվող ծառայություններից օգտվելուց պարբերաբար ծանոթանալ սույն քաղաքականությանը՝ վերջին փոփոխություններին տեղեկացված լինելու համար։

Շնորհակալություն ԻԴ ՊՐԻՆՏ-ին վստահելու և մատուցվող ծառայություններից օգտվելու համար։ ԻԴ ՊՐԻՆՏ-ը հավատարիմ է որակյալ ծառայությունների մատուցմանը և դրանց ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանը։